Հավելված
Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները
կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 17-ի
№165Ա որոշման

Հավելված
Հաստատված է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի
հանձնաժողովի 1999 թվականի հունիսի 18-ի
№9 որոշմամբ

**«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզավորված գործունեություն իրականացնելու**

# Պայմանները

**(Լիցենզիա №0006 տրված տրված Հայաստանի Հանրապետության էներգետիկայի հանձնաժողովի 1999 թվականի հունիսի 18-ի №9 որոշմամբ)**

## 1. ԼԻՑԵՆԶԻԱՅՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Սույն լիցենզիայում օգտագործված հասկացություններն են.

1) **Շուկայի կանոններ՝** «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված՝ Հանձնաժողովի կողմից հաստատված հիմնարար փաստաթուղթը, որով կանոնակարգվում են էներգետիկայի բնագավառում գործունեություն իրականացնող լիցենզավորված անձանց փոխհարաբերությունները, բնագավառի հուսալիության և անվտանգության հետ առնչվող հիմնական կանոններն ու ցուցանիշները, ինչպես նաև դրանց և շուկայի բնականոն աշխատանքի ապահովման համար անհրաժեշտ մեխանիզմները.

2) **Լիցենզիա՝** Հանձնաժողովի կողմից Լիցենզավորված անձին տրված սույն փաստաթուղթը, որը հավաստում է վերջինիս իրավունքը և պարտականությունը սույն լիցենզիայով սահմանված տարածքում և պայմաններով իրականացնելու էլեկտրական էներգիայի (հզորության) հաղորդման լիցենզավորված գործունեություն.

3) **Լիցենզավորված անձ՝** «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություն.

4) **Հանձնաժողով՝** Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով.

5) **Համակարգի օպերատոր՝** Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման լիցենզիա ունեցող անձ.

6) **Հաղորդման ցանց՝** էլեկտրական էներգիայի հաղորդման գծերի (ենթակայանների և այլ սարքավորումների) միասնական համակարգը, որի միջոցով էլեկտրական էներգիան հաղորդվում է բաշխողին և (կամ) սպառողին և (կամ) արտահանվում և (կամ) տարանցվում է երրորդ երկիր.

7) **Ռելեական պաշտպանություն՝** ավտոմատ սարքվածքների համալիր, որը նախատեսված է վթարային իրավիճակներում էլեկտրաէներգետիկական համակարգի վնասված տարրերի արագ ախտորոշման և էլեկտրաէներգետիկական համակարգից առանձնացման համար՝ ամբողջ էլեկտրաէներգետիկական համակարգի բնականոն աշխատանքի ապահովման նպատակով.

8) **Հակավթարային ավտոմատիկա՝** սարքվածքների համախումբ, որը ապահովում է էլեկտրաէներգետիկական համակարգի ռեժիմների կառավարման գործողությունների իրականացում՝ էլեկտրաէներգետիկական համակարգի վթարային ռեժիմների ախտորոշման, զարգացման կանխարգելման և վերացման նպատակով.

9) **Սակագին՝** էլեկտրական էներգիայի և (կամ) հզորության միավորի վաճառքի, էլեկտրաէներգետիկայի բնագավառում լիցենզավորված գործունեությամբ մատուցվող ծառայությունների համար Հանձնաժողովի կողմից «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան սահմանված գին.

10) **Ֆորս մաժոր՝** արտակարգ և անկանխելի այն դեպքերն ու հանգամանքները, որոնք առաջացել են Լիցենզավորված անձի կամքից անկախ և միևնույն ժամանակ, անկախ վերջինիս գործադրած ջանքերից, խոչընդոտել են պարտավորությունների կատարմանն ուղղված նրա գործողություններին: Սույն Լիցենզիայի իմաստով արտակարգ և անկանխելի դեպքերն ու հանգամանքներն են բնական և տեխնածին աղետները, բնության ուժերի արտասովոր դրսևորումները (այդ թվում՝ ջրհեղեղներ, երկրաշարժեր, փոթորիկներ, պտտահողմեր, կայծակով և ամպրոպով ուղղորդվող հորդառատ անձրևներ, ձնաբքեր, սողանքներ), գործադուլները, հասարակական անկարգությունները, ահաբեկչությունները, պատերազմները և ապստամբությունները: Սույն ենթակետը չի սահմանափակում Լիցենզավորված անձի իրավունքը սույն կետում նշվածից բացի այլ արտակարգ և անկանխելի դեպքեր ու հանգամանքներ ի հայտ գալու պարագայում դիմել Հանձնաժողով՝ դրանք Ֆորս մաժոր ճանաչելու համար:

## 2. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

2. Լիցենզիան ուժի մեջ է մտնում 1999 թվականի հունիսի 26-ից:
3. Լիցենզիան գործում է անժամկետ:

## 3. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

4. Լիցենզավորված գործունեության աշխարհագրական տարածքը Հայաստանի Հանրապետության ողջ տարածքն է:

## 4. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄՈՂ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

5. Լիցենզավորված անձին իրավունք է տրվում և պարտավորեցվում է էլեկտրաէներգետիկական համակարգում իրականացնել հետևյալ գործառույթները.
   1) Հաղորդման ցանցով իր և էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի մասնակիցների էլեկտրական էներգիայի հաղորդում.
   2) Հաղորդման ցանցի կառուցում (վերակառուցում), շահագործում և սպասարկում.
   3) Էլեկտրական էներգիայի տարանցում երրորդ երկրներ.
   4) Էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշներով սահմանված որակի էլեկտրամատակարարման ապահովման համար համակարգային ծառայությունների մատուցում՝ համաձայն Շուկայի կանոնների.
   5) Շուկայի կանոններով նախատեսված դեպքերում և կարգով՝ էլեկտրաէներգետիկական համակարգի վթարների վերացմանը մասնակցություն՝ վթարի վերացման իրենց ներքին հրահանգի և Համակարգի օպերատորի կողմից տրվող կարգադրությունների համաձայն.
   6) Շուկայի կանոններով նախատեսված այլ գործառույթներ:
6. Առանց Հանձնաժողովի հետ համաձայնեցնելու Լիցենզավորված անձն իրավունք չունի լիցենզավորված գործունեությանն առնչվող որևէ իրավունք կամ պարտականություն պայմանագրային կամ այլ հիմունքներով ամբողջովին կամ մասնակի օտարել, զիջել, գրավ դնել կամ փոխանցել մեկ այլ անձի:

## 5. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

7. Լիցենզավորված անձի գործունեությունը պետք է համապատասխանի Լիցենզիայի, «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, Շուկայի կանոնների, Հանձնաժողովի ընդունած և այլ իրավական ակտերի պահանջներին:

8. Լիցենզավորված անձը իր տեղակայանքների շահագործումը, սպասարկումն ու պահպանումը իրականացնում է Շուկայի կանոնների և Հայաստանի Հանրապետության տեխնիկական կանոնակարգերի պահանջների համաձայն:
9. Լիցենզավորված անձը Շուկայի կանոնների համաձայն Համակարգի օպերատորի օպերատիվ ենթակայության ներքո է հանձնում իր տնօրինման տակ գտնվող սարքավորումները և սարքվածքները, ապահովում է իր տնօրինության տակ գտնվող տարածքներում տեղադրված՝ Համակարգի օպերատորի սեփականությունը հանդիսացող սարքավորումների և սարքվածքների պահպանումը, ինչպես նաև կատարում է վերջինիս կողմից տրված օպերատիվ կարգադրությունները:
10. Լիցենզավորված անձը ապահովում է Ռելեական պաշտպանության և համակարգային նշանակության Հակավթարային ավտոմատիկայի իր սարքվածքների աշխատունակությունը՝ Էլեկտրաէներգետիկական համակարգի հուսալիության և անվտանգության ցուցանիշների, ինչպես նաև տեխնիկական կանոնակարգերի պահանջներին համապատասխան:
11. Լիցենզավորված անձը յուրաքանչյուր տարի պարտավոր է իրականացնել նախորդ տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտ և աուդիտորական եզրակացությունն ու հաշվետվությունը ներկայացնել Հանձնաժողով:
12. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողով ներկայացնել իր մոտ կայացած աուդիտորական կամ իրավասու մարմինների ստուգման եզրակացությունները:
13. Լիցենզիայի գործողությունը չի տարածվում Լիցենզավորված անձի հետ համատեղ, այդ թվում՝ համատեղ գործունեության պայմանագրով գործունեություն իրականացնող այլ անձանց, ինչպես նաև Լիցենզավորված անձի մասնակցությամբ հիմնադրված կամ գործող իրավաբանական անձանց վրա:
14. Լիցենզավորված անձի և էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց միջև կնքված պայմանագրերը պետք է

համապատասխանեն Հանձնաժողովի սահմանած պայմանագրերի օրինակելի ձևերին և (կամ) պարտադիր պայմաններին:

15. Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի թույլտվության չի կարող դառնալ էներգետիկայի բնագավառում լիցենզիա ունեցող մեկ այլ անձի 25 տոկոս և ավելի մաս կազմող բաժնետեր, փայատեր կամ միավորվել լիցենզիա ունեցող մեկ այլ անձի հետ:

16. Լիցենզավորված անձի կանոնադրական կապիտալում 25 տոկոս և ավելի մասնակցություն ունեցող բաժնետերը կամ փայատերը առանց Հանձնաժողովի թույլտվության իրավունք չունի ձեռք բերել Լիցենզավորված անձի կամ էներգետիկայի բնագավառում մեկ այլ գործունեության լիցենզիա ունեցող անձի 25 տոկոս և ավելի բաժնետոմս, բաժնեմաս կամ ունենալ փայամասնակցություն, ինչպես նաև վաճառել 25 տոկոս և ավելի բաժնետոմսեր:

17. Լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ հիմնական գույքը վաճառելու կամ գույքի նկատմամբ իրավունքը որևէ այլ կերպ փոխանցելու համար Լիցենզավորված անձը դիմում է Հանձնաժողով՝ համաձայնություն ստանալու նպատակով:

18. Լիցենզավորված անձը պարտավոր է ապահովել լիցենզավորված գործունեության մեջ ներգրավված շենքերի, շինությունների, տեղեկատվական բազայի և այլ գույքի մատչելիությունը Հանձնաժողովի ներկայացուցիչների, իսկ Շուկայի կանոններով նախատեսված դեպքերում՝ նաև էներգետիկայի բնագավառում լիցենզավորված այլ անձանց համար:

19. Լիցենզավորված անձը Հանձնաժողովի սահմանած կարգով Հանձնաժողով է ներկայացնում ֆինանսական և տեխնիկատնտեսական հաշվետվություններ և տեղեկատվություններ:

20. Լիցենզավորված անձը, ներդրումներ կատարելու մտադրության դեպքում, պարտավոր է սահմանված կարգով Հանձնաժողովի համաձայնեցմանը ներկայացնել ներդրումային ծրագրերը՝ հետագա Սակագնում ներդրումների լրիվ կամ մասնակի ներառման կամ մերժման նպատակով:

21. Լիցենզավորված անձի կողմից Հանձնաժողով ներկայացված տեղեկատվությունը հրապարակային է, եթե դրանք Լիցենզավորված անձի կողմից չեն համարվում գաղտնի և նշված չեն որպես «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվություն»՝ Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն: Լիցենզավորված անձն իրավունք ունի ապացուցել, որ իր ներկայացրած տվյալների (ներառյալ՝ «ընկերությանը վերաբերող գաղտնապահական տեղեկատվության») հրապարակումը կարող է վնասել ընկերության մրցակցային գործունեության շահերին, որը գերակա է հրապարակման հասարակական շահից: Հանձնաժողովն իրավասու է ընդունել կամ մերժել նման տեղեկատվության չհրապարակման վերաբերյալ Լիցենզավորված անձի խնդրանքը:
22. Լիցենզավորված անձը պատասխանատվություն է կրում Հանձնաժողով ներկայացրած լիցենզավորված գործունեության մասին հաշվետվությունների և այլ տեղեկատվության հավաստիության համար:
23. Լիցենզավորված անձի գործունեության հաշվապահական հաշվառումը, հաշվետվությունները և տեղեկատվությունները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Հանձնաժողովի կողմից սահմանված իրավական ակտերի պահանջներին:
24. Լիցենզավորված գործունեության հաշվապահական հաշվառումը և հաշվետվությունը պետք է առանձնացված լինեն Լիցենզավորված անձի կողմից իրականացվող այլ գործունեության հաշվապահական հաշվառումից և հաշվետվությունից:
25. Լիցենզավորված անձի Սակագինը սահմանում է Հանձնաժողովը՝ օրենքով սահմանված կարգով: Լիցենզավորված անձը կարող է կիրառել Հանձնաժողովի սահմանած Սակագնից ավելի ցածր Սակագին, պայմանով, որ չի վտանգում կամ չի վտանգի լիցենզավորված գործունեությունը և եթե այդ իջեցումը կատարվում է Լիցենզավորված անձի շահույթի հաշվին: Սակագների նման իջեցման դեպքում

նոր Սակագներ սահմանելիս Հանձնաժողովը հաշվի չի առնում Սակագների իջեցման հետևանքով Լիցենզավորված անձի հնարավոր վնասները:

26. Լիցենզավորված անձն առանց Հանձնաժողովի համաձայնության իրավունք չունի զբաղվել այլ տնտեսական գործունեությամբ: Լիցենզավորված անձի կողմից իրականացվող տնտեսական (ձեռնարկատիրական) այլ գործունեությունը չպետք է վտանգի Լիցենզիայի պայմանների պատշաճ կատարումը:

27. Լիցենզավորված անձը պարտավոր է Հանձնաժողովին անմիջապես հայտնել այն հանգամանքների մասին, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել Լիցենզիայի պայմանների խախտումների:

## 6. ԼԻՑԵՆԶԱՎՈՐՎԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՒՄ

28. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն իրականացնում է Հանձնաժողովը:

29. Լիցենզիայի պայմանների պահպանման վերահսկումն ապահովելու նպատակով Հանձնաժողովը և նրա կողմից լիազորված ներկայացուցիչներն իրավունք ունեն մուտքի իրավունք Լիցենզավորված անձի տարածք: Վերահսկումն իրականացնելու ընթացքում Լիցենզավորված անձը պետք է լիովին համագործակցի և աջակցի Հանձնաժողովին կամ նրա կողմից լիազորված ներկայացուցչին:

30. Հանձնաժողովի կողմից լիազորված ներկայացուցիչները Լիցենզավորված անձի տարածքում պահպանում են ընկերության ներքին կանոնակարգը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմերը:

## 7. ՏՈՒԺԱՆՔՆԵՐԸ

31. Լիցենզավորված անձի կողմից «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթները, Հանձնաժողովի ընդունած իրավական ակտերը, Լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու

դեպքերում Հանձնաժողովն իրավասու է տալու խախտումները վերացնելու վերաբերյալ հանձնարարականներ և կարող է կիրառել տուժանքների հետևյալ տեսակները՝

1) նախազգուշացում.
2) «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տուգանքներ.
3) Լիցենզիայի գործողության կասեցում.
4) Լիցենզիայի գործողության դադարեցում:

32. Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի գործողությունը դադարեցնելու դեպքում Հանձնաժողովը և Լիցենզավորված անձը ղեկավարվում են «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

33. Լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել նաև Լիցենզավորված անձի նախաձեռնությամբ՝ նրա գրավոր դիմումի հիման վրա: Մինչև Լիցենզիայի կասեցման կամ գործողության դադարեցման վերաբերյալ Հանձնաժողովի կողմից համապատասխան որոշում ընդունելը, Լիցենզավորված անձը պարտավոր է շարունակել գործունեությունը՝ համաձայն Լիցենզիայի պայմանների:

34. Լիցենզավորված անձը չի ենթարկվում պատասխանատվության՝ Լիցենզիայի 31-րդ կետով սահմանված կարգով, եթե նրա գործունեության մեջ արձանագրված խախտումները Ֆորս մաժորի հետևանք են:

## 8. ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՈՒՄ, ԼԻՑԵՆԶԻԱՅԻ ՎԵՐԱՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

35. Լիցենզիայում փոփոխություններ կատարվում են Լիցենզավորված անձի կամ Հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

36. Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայի փոփոխությունները կատարվում են Լիցենզավորված անձի համաձայնությամբ, բացառությամբ այն դեպքերի, երբ նախատեսվող փոփոխություններն անհրաժեշտ են Հայաստանի Հանրապետության օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի պատշաճ կատարումն ապահովելու համար:
37. Հանձնաժողովի նախաձեռնությամբ Լիցենզիայում կատարված փոփոխությունների հետևանքով Լիցենզավորված անձի կրած վնասները փոխհատուցվում են Սակագնով:
38. Լիցենզավորված անձի վերակազմակերպման կամ նրա անվանման կամ գտնվելու վայրի (հասցեի) փոփոխման դեպքում Լիցենզավորված անձը պարտավոր է այդ փոփոխություններն իրավական ուժ ստանալու օրվանից սկսած՝ 15-օրյա ժամկետում Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով հայտ ներկայացնել Լիցենզիայի վերաձևակերպման համար:
39. Լիցենզիայի գործողության ժամկետի երկարաձգման համար Լիցենզավորված անձը հայտ է ներկայացնում Հանձնաժողով՝ վերջինիս կողմից սահմանված կարգով:
40. Լիցենզավորված անձի գործունեությունը թափանցիկ է: Լիցենզավորված անձը պարտավոր է լիցենզավորված գործունեության առնչությամբ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզիա ունեցող այլ անձանց և (կամ) շահագրգիռ կողմերի հարցման դեպքում նրանց տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն և նյութեր, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ տեղեկատվությունը և նյութերը համարվում են գաղտնի:

## 9. ԾԱՆՈՒՑՈՒՄ

41. Լիցենզիայի վերաբերյալ բոլոր ծանուցումները, հայտերը, պահանջները կամ այլ տեղեկացում և (կամ) փաստաթղթերի հանձնումը պետք է կատարվի պատշաճ կերպով:

42. Տեղեկացումը կամ փաստաթղթերի հանձնումը համարվում է պատշաճ ձևով կատարված, եթե դրանք ուղարկվել են պատվիրված նամակով՝ հանձնման մասին ծանուցմամբ կամ հաղորդագրության ձևակերպումն ապահովող կապի այլ միջոցների օգտագործմամբ (այդ թվում՝ հայտատուի կողմից նշված հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելով) կամ էլեկտրոնային համակարգի միջոցով, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված էլեկտրոնային կապի այլ միջոցներով կամ հանձնվել են ստացականով:

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերություն
(ընկերության անվանումը)

Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Զ. Անդրանիկի 1
(գտնվելու վայրը)

գործունեության վայրը Հայաստանի Հանրապետության տարածք

**ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ**